



ՎԱԶԷ Ծ. ՎԴԻ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ  
(1939-2003)



ԿԱԿՈՒԿՈՍԱԿՈ ՊԱՍՏՈՒԿՐԱԿՈՒԻԿՈՆ  
ԵՒՐՈՍՅԻ ՀԱՅՈՑ

\*

DÉLÉGATION POUR L'EUROPE  
DU CATHOLICOSSAT DE TOUS LES ARMÉNIENS

Մ Ա Հ Ա Զ Դ

15. RUE JEAN-GOUJON  
75008 PARIS

Խոր վշտով կը գուժենք յանկարծական անժամանակ Վախճանումն՝

Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ  
Նաւիրեալ Սպասաւորին,

Երոսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց  
զինուորեալ Ուխտին Միաբանին,

Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակութեան  
Հոգեւորական Պաշտօնէին,

Ֆրանսայի ու յատկապէս Մարսէյլի Հայաստանեայց Եկեղեցեաց  
Հոգեւոր Հովիւին,

Իզնատիոսեան Ընտանիքի Հարազատին,

S. ՎԱՀԷ ԵԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐՊԱՊԵՏ ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆԻ

որ պատահեցաւ Մարսէյլի մէջ, Երկուշաբթի՝ 6 Յունուար 2003-ին՝  
Սուրբ ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնի երեկոյեան:

Հանգուցեալ Հայր Սուրբի Վերջին Օծման եւ ԹԱՄԱՆԱԿԱՆ  
ԿԱՐԳԸ տեղի կ'ունենայ Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ  
մէջ - 339 աւերնիւ տիւ Փրատօ-, ըստ հետեւեալին.-

Կիրակի օր, 12 Յունուարին, յետ միջօրէին՝ ժամը 4-ին՝  
ՏԱՆ ԿԱՐԳԸ կը կատարուի:

Երկուշաբթի օր, 13 Յունուարին՝ առաւօտեան ժամը 9-էն սկսեալ՝  
Սուրբ Պատարագի Մատուցմամբ՝ Վերջին Օծում:

Յետ Պատարագի՝ ԹԱՄԱՆ ԿԱՐԳԸ կը կատարուի՝  
Մարսէյլի Սէն Փիէրի Գերեզմանատան՝ Հոգեւորականաց  
Բաժնին մէջ:

Վշտակից Սիրով Աղօթեցէք՝  
,,Յիշատակն Արդարոյն Օրհնութեամբ Եղիցի,,

Դ Ի Ռ Ա Ն



# ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱՅՈՑ

## ARMENIAN PATRIARCHATE

Թուական / Date 9 Յունուար 2003

№ \_\_\_\_\_

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց  
Միաբանութեան Միաբանակից Եղբայրներուն

Մեր Միաբանակից եղբայրներուն խոր վշտով կը յայտնենք անակնկալ վախճանումը Միաբանութեան անդամներէն Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեանի, Երկուշաբթի, 6 Յունուար 2003, Ս. Մննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնի գիշերը, Մարսիլիոյ հիւնադանոցի մէջ: Հանգուցեալ Հայր Սուրբի Վերջին Օծման Կարգը տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 13 Յունուար, Մարսէլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ: Յետ Պատարագի՝ Թաղման Կարգը կը կատարուի Մարսիլիոյ Սէն Փիէռ Գերեզմանատան մէջ, ուր անիւնը կը հանգչի Հոգեւորականաց Բաժնին մէջ: Միաբանութեան անունով Յուդարկաւորութեան պիտի մասնակցի Լուսարարայեւ Տ. Նուրեան Արք. Մանուկեան: Իսկ Յունուար 14ին Հոգեհանգստեան պաշտամունքը պիտի կատարենք Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան, աւագնի անունով Յարութիւն, ծնած է Պէյրութ, 20 Յունուար 1939ին: Նախնական հոգեւոր կրթութիւնը կը ստանայ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքէն ներս, ուր չորս տարի ուսանելէն ետք, 1958ին կ'ընդունուի Երուսաղեմի Ժառանգաւորաց Վարժարանի Ընծայարանի բաժինը: 1961 Հոկտեմբեր 1ին կը ձեռնադրուի կուսակրօն ֆահանայ՝ ձեռամբ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի:

1966ին կը մեկնի Բարիգ՝ խորացնելու իր գիտելիքները Աստուածաբանութեան եւ Հայրաբանութեան մէջ: Կ'ընդունուի Կաթողիկեան Համալսարան, ուր կ'ուսանի մինչեւ 1969ը՝ ստանալով աւարտական վկայական: Հովուական պաշտօնին բերումով անիկա կը դրկուի Մարսէլ քաղաքի Ս. Թաղէոս եւ Բարթուղիմէոս հայաշատ եկեղեցին: Ծայրագոյն Վարդապետական աստիճանը իրեն կը շնորհուի 1977ին Եղիշէ Պատրիարքին ձեռնով:

Վախճանեալ Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան հեղինակած է բազմաթիւ ջատագովական եւ աստուածաբանական գիրքեր եւ յօդուածներ, որոնց կարգին յիշատակելի են «Բարեխօսութիւն Սրբոց», «Սուրբ Պատարագը», «Հայկական մանրանկարչութիւն եւ Թարոս Ռոսիւն», «Աստուածամայրը» եւայլն: Գիրքերէն ոմանք թարգմանուած են անգլերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներով:

Կ'աղօթենք որ Տէրը ընդունի հոգին Իր Ս. Եկեղեցւոյ նուիրեալ եւ ժրջան սպասաւորին, մէկի տեղ բազում մշակներ անցնելով մեր ժողովուրդի հոգեւոր անդաստանին մէջ, համալրելով նօսրացող շարքը Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան:

«Յիշեա՛, Տէր, զհոգի ծառայի եւ պաշտօնէի Եկեղեցւոյ Քո սրբոյ,  
ի լոյս երեսաց Քոց:»  
Սիրոյ Ողջօգնի  
*Թորգոմ Արք. Մանուկեան*  
Թորգոմ Արք. Մանուկեան  
Հայ Պատրիարք Երուսաղեմի



# ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՏԻ ՆԱՅՈՑ

## ARMENIAN PATRIARCHATE

№ \_\_\_\_\_

Քաղկանի  
Date 9 Յունուար 2003

Նորին Ս. Օծուխին  
Տ. Տ. Գարեգին Բ.  
Ծայրագոյն Պատրիարք  
և Կաթողիկոս Ամենայն Հայոց  
Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Խոր վշտով կը յայտնենք անակնկալ վախճանումը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէն Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեանի, Երկուրաբթի, 6 Յունուար 2003, Ս. Ծննդեան եւ Աստուածյայտութեան Տօնի գիշերը, Մարսիլիոյ հիւանդանոցի մէջ:

Ըստ կարգադրութեանց, հանգուցեալ Հայր Սուրբի Վերջին Օծման եւ Թաղմանական Կարգը տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 13 Յունուար, Մարսէլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ մէջ: Երուսաղէմէն, Միաբանութեանս անունով Յուղարկաւորութեան պիտի մասնակցի Լուսարարայեւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան:

Յունուար 14ին Հոգեհանգստեան պաշտամունքը պիտի կատարենք Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Կ'աղօթենք, որ Տէրը ընդունի հոգին Իր Ս. Եկեղեցւոյ նուիրեալ եւ ժրաջան սպասաւորին, մէկի տեղ բազում մշակներ անեցնելով մեր ժողովուրդի հոգեւոր անդաստանին մէջ:

Վեհիդ ֆաշտողչութեան եւ արդիւնաշատ տարիներու բարի մաղթանքներով.

Մատչիմք Վեհիդ Օծեալ Աշոյն  
Խոնարհարար

*Թորգոմ Արք. Մանուկեան*  
Թորգոմ Արք. Մանուկեան  
Հայ Պատրիարք Երուսաղէմի

ՓՈՍՏԱՐԿՂ 14235	ՆԵՌԱՉԱՅՆ 6264866	ՅԱՐՍ 6264862	ԵՐՈՒՍԱՂԷՍ ԻՍՐԱԵԼ
P.O.BOX 14235	PHONE: 6264866	FAX: 6264862	JERUSALEM ISRAEL

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՉՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 29

12 հունվար, 2003 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ  
Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ  
*Երուսաղեմ, Իսրայել*

Սիրելի Սրբազան Պատրիարք,

Խոր ցավով ու աստուածնրով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու երախտարժան զավակ և նվիրյալ սպասավոր, Երուսաղեմի Հայոց պատրիարքության Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ հոգեշնորհ Տ. Վաչե ծայրագույն վարդապետ Իգնատիոսյանի մահվան մասին:

Վշտակից հոգով հանուրց հայության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր անկեղծ ցավակցությունն ենք բերում Ձեզ և Սրբոց Հակոբյանց միաբանությանը, հոգեւոյս Հայր Սուրբի բոլոր մերձավորներին և սգակից հավատավոր հայորդյաց:

Երջանկահիշատակ Տ. Վաչե ծայրագույն վարդապետ Իգնատիոսյանը բազում տարիներ անխռնջ սպասավորությամբ իր կարելին ի սպաս դրեց հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության և իր հոգևոր գրական ստեղծագործություններով աստվածգիտության լուսի ճառագայթներն անդրադարձեց քարեպաշտ մեր հավատացելոց հոգևոր կյանքում՝ լուսավորելով նրանց ընթացքն առ Աստված:

Հայրապետիս աղոթքն ու հայցն է, որ Բարեգութ Տերն ամենադատ ողորմությամբ գթա ննջեցյալ իր ծառային և երկնային լուսեղեն հարկերում խաղաղության ու համգստության մեջ ընդունի լուսահոգի Հայր Սուրբի հոգին՝ արժանացնելով փառաց լուսեպսակին և Երկնի անանց արքայությանը:

Խումնկ, մշտանրմունջ աղոթք և բյուր օրհնություն ի Տեր ննջեցյալ հոգեւոյս Տ. Վաչե ծայրագույն վարդապետ Իգնատիոսյանի արդար հիշատակին և լույս շիրիմին:

«Աղաչենք զՔեզ գթած, երկայնամիտ եւ ողորմած. ողորմեա Քո ստեղծութեան յուսով ի Քեզ ննջեցելոյս. ամեն»:

Եղբայրական սիրո ողջունիվ,  
վշտակից աղոթակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ